

Համարը N 415 Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ԼՂՀԳՏ-ում չի հրապարակվել Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004	Տեսակը Մայր Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Ստեփանակերտ Ընդունման ամսաթիվը 16.11.2004 Ստորագրման ամսաթիվը 16.11.2004 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը
---	--

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՆԱԿԱՆ ԲՈՒԺԻՉ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 415

ք.Ստեփանակերտ

### ԲՈՒԺԻՉ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 26-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

- Հաստատել **բնական** բուժիչ ջրային ռեսուրսների օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ներկայացնելու առաջարկություն **բնական** բուժիչ ջրային ռեսուրսների նպատակային և գերակայական օգտագործման վերաբերյալ:

ԼՂՀ ԿԱՐԳԱՊԵՏ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված  
ԼՂՀ կառավարության  
2004թ. նոյեմբերի 16-ի  
թիվ 415 որոշման

### Կ Ա Ր Գ

#### ԲՆԱԿԱՆ ԲՈՒԺԻՉ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

- Սույն կարգով կանոնակարգվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում **բնական** բուժիչ ջրային ռեսուրսների օգտագործման գործընթացը:
- բնական** բուժիչ ջրային ռեսուրսներն օգտագործման է տրամադրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և **բնական** ռեսուրսների վարչությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների զարգացման և քաղաքաշինության նախարարության եզրակացությունների առկայության դեպքում:
- բնական** բուժիչ ջրային ռեսուրսների՝ բուժման նպատակով ըստ բժշկական ցուցումների նպատակային և գերակայական օգտագործմանը ներկայացվող պահանջները պարտադիր են ջրօգտագործման թույլտվության ձևակերպման ու ջրօգտագործման ընթացքում:
- բնական** բուժիչ ջրային ռեսուրսներն օգտագործողներն ապահովվում են տվյալ **բնական** բուժիչ ջրային ռեսուրսի կազմի և բուժիչ հատկությունների օգտակարության մասին հասարակությանը տեղեկատվության տրամադրումն ու դրա մատչելիությունը:
- Ջրօգտագործման նույն նպատակների դեպքում՝ անձի սեփականությունը հանդիսացող հողամասում ձևավորվող ստորերկրյա **բնական** բուժիչ ջրային ռեսուրսի օգտագործման նկատմամբ տվյալ անձն ունի ջրօգտագործման թույլտվություն ձեռք բերելու առաջնահերթության իրավունք:
- Ջրառաջարկի նկատմամբ **բնական** բուժիչ ջրերի ջրապահանջի գերազանցման դեպքում՝ **բնական** բուժիչ ջրերի օգտագործման իրավունքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և **բնական** ռեսուրսների վարչության կողմից տրամադրվում է սահմանված կարգով անցկացվող աճուրդով:

ԼՂՀ կառավարության աշխատակա

Ս. Գրիգորյան

գմի  
դեկավար-նախարար